



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**

**WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



**ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ
ՀՈԼԻՎՈՒՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ
ԲԱՐԵՉԱՐԴԵԱԼ Ս. ԽՈՐԱՆԻ ՕԾՈՒՄ՝
ՁԵՌԱՄԲ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀՕՐ**

Կիրակի, 13 Ապրիլ 2008-ին, Հոլիվուդի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ մէջ եպիսկոպոսական հանդիսաւոր սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց Թեմիս բարեխնամ Առաջնորդ՝ Բարձր. Ս. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան:

Ս. Սեդանին սպասարկեցին Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն Գերպ. Ս. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւը՝ Արժ. Ս. Վիգէն Ա. Քհնյ. Վասիլեան:

Ս. Պատարագին ներկայ էին Թեմիս նախկին առաջնորդներէն Գերշ. Ս. Եփրեմ Ս. Արք. Թապագեան, եկեղեցւոյ հիմնադիր հովիւն Արժ. Ս. Նարեկ Ա. Քհնյ. Շիրիգեան, ինչպէս նաեւ Արժ. Ս. Խորէն Ա. Քհնյ. Հայէշեան, սուրբ խորանին սպասարկող եկեղեցւոյ բարեշնորհ սարկաւազներ, Ազգ. Վարչութեան ներկայացուցիչներ, երեսփոխաններ, նուիրատուներ եւ Ս. Խորանին բարերարներ՝ Տեր եւ Տիկ. Յակոբ եւ Հայկուհի Դաղլեան:

Նշենք, որ եկեղեցւոյ դասին, բեմին եւ յատկապէս Ս. Խորանին նորոգութեան աշխատանքները տեւեցին 6 ամիս: Յընթացս Ս. Պատարագի, տեղի ունեցաւ Ս. Խորանին ջուրով եւ գինիով լուացումը, ապա կատարուեցաւ օծումն ու սրբացումը, ձեռամբ Առաջնորդ Սրբազանին:

Իր պատգամ քարոզին մէջ, Առաջնորդ Սրբազան Հայրը գոհութիւն եւ փառք վերառաքեց Աստուծոյ, որ այսօր, որպէս հաւատաւոր ուխտաւորներ Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ, արժանի ըրաւ օրհնեալ այս պահը ապրելու եւ ֆիզիքական ու հոգեկան աչքերով տեսնելու լուսազգեստ պայծառացումն ու օծումը եկեղեցւոյ խորանին: Շնորհաւորեց եւ գնահատեց եկեղեցւոյ նուիրեալ Հովիւ՝ Արժ. Վիգէն Ա. Քհնյ. Վասիլեանի պատրաստակամութիւնն ու գործակցութիւնը հոգաբարձական կազմին եւ շինարարական յանձնախումբին հետ, գլխաւորութեամբ Տիար Վահան Պզտիկեանի, որոնք շատ կարճ ժամանակամիջոցի մէջ աստուածահաճոյ բարի այս գործը յաջողութեամբ աւարտեցին:

«Եկեղեցւոյ մէջ այսօր սրբութեան խորան կանգնեցիր որպէսզի Աստուած փառաւորելով լոյս, օրհնութիւն, բժշկութիւն եւ փրկութիւն բաշխուի բոլոր անոնց, որոնք սուրբ Խորանիդ հաւատքով եւ երկիւղածութեամբ կ'երկրպագեն», ըսաւ պատարագիչ Սրբազանը,

յիշեցնելով, որ Հայց. Առաք. Եկեղեցին այս Կիրակին անուանած Է Կարմիր, որովհետեւ յարութեան շունչով վերանորոգ Քրիստոսի եկեղեցին, աշխարհի ազգերուն եւ ժողովուրդներուն մէջ մարտիրոսներու արեան վկայութեամբ, նահատակութեամբ տարածուեցաւ, ամրապնդուեցաւ եւ հաստատուեցաւ: Ապա, Առաջնորդ Սրբազանը կոչ ուղղեց ըլլալու երախտապարտ նահատակներու արեամբ գնուած մեր հոգիներու փրկութիւնը երաշխաւորող Հայ Եկեղեցւոյ, եւ ապրիլ մեր սրբազան հայրերու հաւատքով, անոնց եկեղեցանուէր կեանքով ծառայել Աստուծոյ, եկեղեցւոյ ու հայրենիքին:

Ս. Պատարագի աւարտին, եկեղեցւոյ «Կարապետեան» սրահին մէջ, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, Ս. Խորանի օծման ուրախ առթիւ տեղի ունեցաւ յատուկ տօնախմբութիւն եւ սիրոյ ճաշ: Գեղարուեստական յայտագիրը ձեռնհասօրէն վարեց եկեղեցւոյ Հովիւր, որ իր կարգին բարձր գնահատեց անցեալի բոլոր բարերարներն ու եկեղեցւոյ եւ ծխական համայնքի հիմնադրութեան սատարողները բայց յատկապէս Ս. Խորանի վերաշինութեան բարերար՝ Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Հայկուհի Դաղլեան ամուրը, ինչպէս նաեւ բոլոր անոնք, որոնք նիւթական, բարոյական թէ այլ ձեւի աջակցութիւն նուիրաբերեցին Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ շինարարական ու բարեգարդման աշխատանքներուն:

Յատուկ պատիւի եւ Առաջնորդ Սրբազան Հօր «Օրհնութեան Գիր»ին արժանացան Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Հայկուհի Դաղլեան ամուրը: Գեղարուեստական յայտագիրին մասնակցութիւն բերին Ազգ. Ռ. եւ Ա. Փիլոպոս երկրորդ. վարժարանի աշակերտները:

PRELATE CELEBRATES DIVINE LITURGY AND CONSECRATES NEW ALTAR AT ST. GARABED CHURCH

On Sunday, April 13th, the H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy, delivered the sermon, and consecrated the newly renovated altar at St. Garabed Church in Hollywood. The Prelate was assisted at the altar by Very Rev. Fr. Muro Aznikian and parish Pastor Rev. Fr. Vicken Vassilian. In attendance were former Prelate H.E. Archbishop Yeprem Tabakian, founding parish Pastor Rev. Fr. Nareg Shrikian, Rev. Fr. Khoren Habeshian, Executive Council representatives, delegates, and the sponsors of the new altar Mr. and Mrs. Hagop and Haiguhi Daglian.

The Prelate began his sermon by thanking God for granting the opportunity for the parish to enjoy the enhancement of their church. He congratulated and commended Rev. Fr. Vicken Vassilian for his commitment to the project and his collaboration with the Board of Trustees and the committee headed by Mr. Vahan Bezdikian, which led to the successful realization of the project.

The Prelate then spoke of the significance of Red Sunday, explaining that is called so because it was by the blood of martyrs that the Word of Christ spread. The Prelate called on the faithful to be grateful for the sacrifices of our martyrs in the establishment of the Armenian Church and to live and serve in

the example of their faith.

At the conclusion of services the Prelate presided over the reception at "Karapetian" Hall, during which the Rev. Fr. Vassikian highly commended all past and present sponsors and volunteers, altar sponsors Mr. and Mrs. Hagop and Haiguhi Daglian, and all those who contributed to the enhancement of the church. The Prelate also commended the Daglian family for their support and presented them with a letter of blessing.